ռուած են. բայց ասկէ մասնաւոր սրահներ կան՝ յորս զետեղուած են Յունաստանէ դուրս գտնուած հելլենական արձանաց կաւիճէ օրինակներն։ Այս բաներս շէնքին երկու յարկը բռնած են. երրորդ մ'ալ կայ որ է հնագիտական գրատունն։ Պաշտօնակալաց սենեակները գետնայարկ շէնքին մէջտեղն են։ Շէնքիս արտաքինն ու ներքինը բոլորովին յունական ճարտարապետութեամբ շինուած է, պարզ ու վեհ ոճով. և սիւնազարդ ճակատն աւելի դուրս կը ցատքեցընէ իր գեղեցկութիւնը։

ՆԱԽԿԻՆ ԵՒՐՈՊԱ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԵՒՐՈՊԱ

Բնութիւնն՝ չէ տուած Եւրոպայի՝ ոչ Ասիոյ և Ամերիկայի ահեղ տարածութիւնը և ոչ Աֆրիկիոյ միատարր զանգուածը։ Մեր թերակղզին իբրև պարզ յաւելուած մը ասիական ընդարձակ ցամաք երկրին՝ չէր կրնար բաւական հովիտ մ'ընծայել, Նեղոսի, Քիանկի և Ամազոնի պէս գետերուն։ Մեր ամենէն մեծ լեռներն ալ ոչ իրենց բարձրութեամբն և ոչ իրենց տարածութեամբը կրնան հաւասարիլ Գորտիլեան և Հիմալայա լերանց. մեր բոլոր խոպաններն և երէզներն մէկտեղ բերելով ալ զգալի սահմանով մը չեն կրնար աճեցընել Աֆրիկիոյ լայնատարած աւազուտ ծովերը. և մեր արշիպեղագոսներն ալ Ովկիանոսի ծովային բաւիղներուն քովանչան կը մնան՝ թէ իրենց մեծութեամբը և թէ գեղեցկութեամբը։ Բնութեան



ԱԹԷՆՔԻ ՀՆԱԳԻՏԱՆ

երեք ցեղապետութեանց արդասիքն Եւրոպայի մէջ շատ բնիկ բերքեր չունին, և ընդհանրապէս քիչ ճոխութիւն և շքեղութիւն կ'ընծայեն։ Մեր հանքերը շատ ոսկի չեղլար, և մեր խիճերուն մէջ ալ ադամանդ խառնուած չէ։

Տասնեհինգ կամ 20 տեսակ չորքոտանի միայն կըրնանք համրել իբր բացարձակապէս մեր երկրին յատուկ, անոնք ալ փոքր և անարդ կենդանիներ են, ինչպէս մուկն և ղղիկ։ Մեր ճարտարութիւնը մասնաւոր խնամքով քանի մը կենդանեաց ցեղերը աղնուացուցեր է, ինչպէս ձի, կով, ոչխար և շուն. բայց մեր բնական բերոց լաւագոյնները, մեծաւ մասամբ աշխարհիս ուրիշ կողմերէն բերուած կ'երևան։ Մետաքսը Հնդկաստանէ եկած է մեզի, բարակասրն'ի Մաւրիտանիոյ. դեղձենին'ի Պարսկաստանէ. նարընջենին 'ի Չինաց. դեղնախնձորն յԱմերիկայէ. բոլոր մեր հարստութիւններն՝ փոխառութիւն և յափշտակութիւն են։

Սակայն մարդկային մտաց զօրութիւնն այնչափ է որ այն աղքատ, կոշտ և վայրենի երկիրը՝ զոր բնութիւնն միայն անտառներով զարդարած և երկաթով հարստացուցած էր, գրեթէ 4000 տարուան քաղաքականութեամբ բոլորովին կերպարանափոխ եղած է. քաղաքականութիւնմը շատ անգամ խափանուած, սակայն միշտ նորէն սկսած, աշխատասէր և պատերազմասէր ժողովրդեան ձեռքը։ Ի զուր գիտութիւնն կը ջանայ որոշել երկրին բնիկ բերքերը արուեստին օգնութեամբ յա-



Ն ՆՈՐ ԹԱՆԳԱՐԱՆԸ

ռաջ եկածէն․ մշակութիւնն ինչուան զկլիմայն ալ փոխած է․ հոն նաւարկութիւնն երկրիս ամեն գօտիներէն բոյսեր բերած է․ այն Եւրոպան՝ ուր ջրշունն խաղաղութեամբ իր թումբերը և տնակները կը կանգնէր միայնացեալ գետոց եզերքը, բազմամարդացած է զօրաւոր տէրութիւններով, ծածկուած են հունձքերով և պալատներով․ այս չափաւոր թերակղզին՝ մարդկային սեռին մայրաքաղաք և տիեզերաց օրէնսդիր եղած է։ Եւրոպան աշխարհիս ամեն կողմը առաջիկայ կը դառնի․ և անոր մեծ ցամաքներուն մէկն՝ ամբողջ մեր գաղթականներով բազմամարդ եղած է․ բարբարոսութիւնն, անապատներն և արեւուն տաքութիւնն՝ ալ պիտի չկարենան քիչ ատենէն զԱփրիկէ ալ մեր գործօն ձեռնարկութենէն զրկել։ Ովկիանիա ալ կարծես թէ մեր արուեստները և օրէնքները կը կոչէ։ Ասիոյ ահեղ տարածութիւնն գրեթէ մեր աշխարհակալութիւններէն կոխուած է․ քիչ ժամանակէն Բրիտանական Հնդկաստանն և Ասիական Ռուսաստանն մէկ մէկու պիտի դպչին, և Չինաց ընդարձակ սակայն տկար ինքնակալութիւնը պիտի չկարենայ մեր ազդեցութեանը դէմ կենալ՝ թէ և դիմանայ մեր զինուցը։ Բովանդակ Ովկիանոս՝ Եւրոպացւոց կամ Եւրոպայի գաղթականացը սեփական կալուած է․ մինչդեռ աշխարհիս միւս մասանց ամենէն կիրթ ազգերն անգամ չեն համարձակեր իրենց ափունքներէն հեռանալ, մեր դիմագրաւ նաւորդները մէկ բեւեռէն ինչուան մէկալ բեւեռ կ'երթան այն ճամբաներով զոր աշխարհագիրք իրենց սենեկաց մէջ կը գծեն։ Միայն մենք մինչև բնութեան սոսկալի ուժերն իսկ մեր կամաց կը հպատակեցընենք․ երկրիս կայծակն պատերազմողաց ձեռքն է․ երկնքին կայծակն ալ կապուած կ'ինկնայ մեր գիտնոց ոտքը։ Մենք մթնոլորտին ալ տիրելու կը ջանանք․ և եթէ դեռ ամպերն ալ ալեաց պէս ոտքով չենք կոխեր, եթէ դեռ չենք կրնար մարմիննիս կորզել այն կապերէն՝ որ այս մոլորակիս հետ զմեզ կը կապեն, գոնէ մեր անմահ և ազատ մտածութիւնն՝ կը դրկէ միջոցաց և դարուց ընդարձակութիւնները։ Գիտութեան ծառն մեր սեփական ժառանգութիւնն է, և միայն մենք գիտենք թէ զայն միշտ պահելու հնարքը, և թէ անոր պտուղները կատարելագործելու գաղտնիքը։

ՄԱԼԴԸ-ՊՐԷՕՆ

ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՑԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ

(Տես երես 51)

ԳԼՈՒԽ Ը․

Ճոյին կարեւորութիւնը․ — Րէզոլիւթին հրամանատարը․ — Քեննէտիին զինարանը․ — Հրաժեշտի ճաշը․ — Փետրուարի 21ին չուն․ — Տոքթորին ուսումնական գումարումները․ — Տիւվէյրիէ, Լիվինկսթըն․ — Օդային ճանապարհորդութեան մանրամասնքը․ — Քեննէտի լռելու դատապարտուած։

Փետրուարի 10ին պատրաստութիւնները լմննալու մօտ էին, գունտերը՝ մէկը միւսին մէջ ամփոփուած բոլորովին լմնցած պատրաստ էին․ իրենց մէջը լեցուած օդոյ սաստիկ ճնշման մը կրցեր էին դիմանալ, և այս փորձը աղէկ վստահութիւն մը կու տար անոնց ամրութեանը վրայ, միանգամայն և կը վկայէր անոնց շինութեանն համար եղած խնամոց ճշդութեանը։

Ճոյ ուրախութենէն ինքզինքէ դուրս ելած էր․ անդադար Կրիք Սդրիդէն Միչէլ պարոններուն գործարանը կ'երթար, միշտ բազմազբաղ, այլ միշտ ծիծաղերես, յօժարակամ այս գործիս վրայօք տեղեկութիւններ տալու անոնց՝ որ իրմէն չէին խնդրեր, և ամենէն աւելի պարծենալով՝ որ տիրոջը պիտոր ընկերանար։ կարծեմ նաև որ օդապարիկը ցուցնելով ու տոքթորին մտածութիւններն ու յատակագիծը մեկնելով,